



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ե ԳՐԵԳՈՐՅԱՆ

2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000069

Ձեռնարկողը՝

«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ» ՍՊԸ
Ք. Էջմիածին, Մարգարայի խճ.4/1

Գործունեությունը՝

**Թափոնների ոչնչացման համալիր ընդլայնման
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվերվություն**
Արմավիրի մարզ, Էջմիածին համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000069

<<12>> 09 2019թ.

Թափոնների ոչնչացման համալիրի ընդլայնման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնակող՝ «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն,
Տեղադրման վայրը՝ Արմավիրի մարզ, Էջմիածին համայնք /Ա կատեգորիա/

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ ընկերությունը նախատեսում է ընդլայնել գոյություն ունեցող գործունեությունը և բացի բժշկական թափոններից վնասազերծել նաև սպանդային, անասնապահական և այլ օրգանական թափոններ: «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ ընկերությունը դեռևս 2008թ.-ից շահագործում է գերմանական IFZW ընկերության արտադրության VE100 մակնիշի կիզարանը՝ գազային այրիչներով, որը երկաստիճան այրման միջոցով ապահովում է ժամում 100.0կգ թափոնների վնասազերծում: Սարքը նախատեսված է սպանդային, բժշկական, անասնապահական, օրգանական թափոնների ջերմային վնասազերծման համար: Ջերմային վնասազերծումը կատարվում է հիմնական և երկրորդային խցերում, ընդ որում երկրորդային խցում ջերմաստիճանը կարող է հասնել 1300°C, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ վնասազերծել թափոնը:

Վնասազերծման ենթակա հիմնական թափոնատեսակներն են.

- կենդանական ծագման թափոններ. հիմնականում սպանդանոցներում առաջացող անասունների մնացորդներ,
- բժշկական թափոններ. կազմակերպություններում պացիենտների հետազոտության, բուժման, բուժկանխարգելիչ աշխատանքների կամ գիտական հետազոտությունների արդյունքում առաջացած թափոններ, որոնք բաժանվում են՝ 1) վարակիչ թափոնների (որոնք իրենց հերթին դասակարգվում են. ա. Միկրոկենսաբանական, բ. Ախտաբանաանատոմիական, գ. կենսաբանական հեղուկներ, դ. սրածայր թափոններ), 2) քիմիական թափոններ - ախտորոշիչ և /կամ փորձարարական գործունեությունից առաջացած կիրառման և օգտագործման ոչ ենթակա, 2) քիմիական նյութեր, ինչպես նաև մաքրման, ախտահանման և այլ գործընթացների ընթացքում առաջացող նյութեր, որոնք ունեն հետևյալ ծառայություններից առնվազն մեկը.

ա. թունավոր/տոքսիկ,

բ. քայքայիչ՝ թթուներ Ph < 2.0 և հիմքեր Ph >12,

գ. դյուրավառ,



դ. ռեակտիվ՝ պայթուցիկ, ջրի նկատմամբ ռեակտիվ, ջերմության նկատմամբ զգայուն քիմիական նյութեր,

ե. ցիտոստատիկ դեղեր, այդ դեղերով բուժվող հիվանդների արտաթորանքներ (մեզ, կղանք, փսխման գանգված և այլն):

- օրգանական թափոններ. սննդամթերք, սննդային հավելումներ:

Թափոնների վնասազերծման կայանքից մոտակա բնակելի տունը գտնվում է 330.0մ հեռավորության վրա, իսկ ամենամոտ կառույցը՝ պահեստային շինություն է, որը գտնվում է մոտ 60.0մ հեռավորության վրա:

Թափոնների հավաքումը պատվիրատուներից իրականացվում է ընկերության կողմից, հատուկ գործարանային կահավորմամբ 3 հատ <<Գազել>> մակնիշի ավտոմեքենաներով: Ընկերության տարածքում թափոնների պահեստավորումն իրականացվում է ըստ թափոնատեսակների:

Հաշվի առնելով ընդլայնման ընթացքում նախատեսվող արտադրողականությունը, ինչպես նաև մեքենաների տարողությունը՝ 2.0տ, 360 երթ/տարի կամ օրական 1, առավելագույնը 2 երթ: Այս քանակը չի կարող որևէ ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի վրա կամ երթևեկության ինտենսիվության վրա:

Ընկերության տարածքում թափոնները պահեստավորվում են հատուկ սառնարանային տիպի՝ 4.0x12.0մ չափսերով, պահեստում, որը թերմոսային տիպի է և կահավորված է հատուկ հովացման համակարգով: Թափոնները նշված պահեստում պահվում են ամառը մինչև 48 ժամ, իսկ ձմռանը՝ 72 ժամ: Համապատասխանաբար ժամանակավոր պահեստավորվող թափոնների առավելագույն քանակը կարող է կազմել՝ 4.0 – 6.0տ:

Վարակիչ թափոնները տարածք են տեղափոխվում հատուկ փակ տարաների կամ հերմետիկ փակված հաստ պատերով տուփերի մեջ և պահպանվում են սառնարանային պահեստում մինչև այրելը:

Ըստ տեխնոլոգիական գործընթացի թափոնները տեղադրվում են սայլակի մեջ և տեղափոխվում սնուցման հարթակ, միանում են հիմնական և երկրորդ աստիճանի այրիչները՝ ջերմաստիճանը հնոցում հասցնելով 1000-1200C°, որից հետո սայլակի պարունակությունը լցվում է հնոցի մեջ: Առաջին աստիճանի հնոցում թափոնների այրումից առաջացած պինդ մասնիկները լցվում են կոնաձև հնոցի տակ՝ ընդունիչ տարողության մեջ, իսկ ծխագազերը տրվում են երկրորդ աստիճանի հնոց, որը ունի գլանաձև կառուցվածք: Այստեղ շնորհիվ երկրորդ այրիչի, որի հզորությունը կրկնակի մեծ է առաջին աստիճանի այրիչից և հավասար է 3720 կՎտ, ջերմաստիճանը բարձրացվում է մինչև 1300C°, ինչը թույլ է տալիս առավելագույն չափով այրել թափոնները: Երկրորդ հնոցում նստում է պինդ մասնիկների ևս մի խմբաքանակ, իսկ ծխագազերը տրվում են հովացման ապարատ, որից հետո առաջին աստիճանի փոշեկլանիչ ցիկլոն: Ցիկլոնից հետո ծխագազերը տրվում են Ա-նման խողովակ, որի հատակին նստում են պինդ մասնիկները: Վերջնական մաքրումը պինդ մասնիկներից տեղի է ունենում երկրորդ աստիճանի ցիկլոնում և ծխագազերը՝ ծխատարի միջոցով, օդամղիչի օգնությամբ: Կայանքի բեռնումը կարելի է կրկնել յուրաքանչյուր 30 րոպեի մեկ՝ հավաքելով թափոնների որոշակի քանակ, մինչև սպառվեն կուտակված թափոնները:

Համալիրի ժամային արտադրողականությունը կազմում է 100.0կգ, մեկ բեռնումը՝ 50.0կգ, վնասազերծման մեկ ցիկլը՝ 0.5 ժամ կամ 30 րոպե, իսկ օրական առավելագույն արտադրողականությունը՝ 2400.0կգ: Համալիրը կաշխատի 11 ամիս՝ ընդամենը՝ 7200.0ժամ/տարի: 1 ամիս կպահանջվի համալիրի ընթացիկ վերանորոգման համար: Տարվա կտրվածքով, մոտավորապես 1 ամսով դադարեցվում է կայանքի աշխատանքը և այն ենթարկվում է համալիր տեխզնության, ստուգվում և կարգաբերվում են բոլոր

անգույցները (այրիչ, հնոց և այլն): Լիարժեք ծանրաբեռնվածության (պատվերների առկայության դեպքում) տարեկան առավելագույն արտադրողականությունը կկազմի՝ 720.0տ/տարի: Որպես վառելիք օգտագործվում է բնական գազ՝ 27.77մ³/ժամ, կամ 200.0հազ.մ³/տարի քանակով, պահեստային վառելիք նախատեսված չէ:

Ընդամենն ընկերության արտադրահարթակում առկա է մթնոլորտային արտանետման մեկ աղբյուր, արտանետվում են 6 անուն վնասակար նյութեր.

- ածխածնի օքսիդ՝ 9.176տ/տարի,
- ազոտի օքսիդներ՝ 1,83 տ/տարի,
- կախված մասնիկներ, 1.814 տ/տարի,
- ծծմբային անհիդրիդ, 15.422տ/տարի,
- ածխաջրածիններ՝ 1.321տ/տարի,
- քլորաջրածին՝ 1.555տ/տարի,
- դիօքսիններ/ֆուրաններ – 0.00000005տ/տարի:

Թվարկված նյութերից գումարային հատկությամբ օժտված են ծծմբային անհիդրիդը և ազոտի օքսիդները:

Թափոնների ջերմային վնասագերծման ընթացքում առաջանում են այրման մնացորդներ (մոխիր): Ըստ արտադրող կազմակերպության տվյալների այրման մնացորդների քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 2-ից 5%-ը: Հաշվի առնելով առավելագույն արտադրողականության ցուցանիշը՝ 720.0տ/տարի, մնացորդների (թափոնի) առավելագույն քանակը կկազմի 36.0տ/տարի:

Որսված պինդ մասնիկները լցվում են երկու մետաղական արկղերի մեջ ժամանակավոր պահեստավորման համար: Յուրաքանչյուր մետաղական արկղի պարունակությունը կազմում է 200.0կգ: Շաբաթական երկու-երեք անգամ մետաղական արկղերի պարունակությունը սանիտարական ծառայության մեքենաներով՝ համապատասխան պայմանագրի հիման վրա, տեղափոխվում է աղբավայր: Տեղափոխումը կատարվում է նույն արկղերով, որոնք դատարկ վիճակում վերադարձվում են ընկերության պահեստ: Հաշվի առնելով աշխատանքի ծանրաբեռնվածությունը օգտագործվում է 8 հատ արկղ: Արկղերի ծառայման ժամկետը չի սահմանափակվում:

Ընկերությունը ջուրն օգտագործում է հեռացող ծխազագերի հովացման և տնտեսական-կենցաղային կարիքների համար: Ջրամատակարարումն ապահովվում է բերովի ջրի հաշվին, իսկ կեղտաջրերը հավաքվում են անջրաթափանց հորում, որը տարածքից հեռացվում է համապատասխան կազմակերպության կողմից:

Լրաայրման խցից հետո, իրականացվում է ծխազագերի ջերմաստիճանի նվազեցումը հովացուցիչում: Հովացուցիչը գլանախողովակային տեսակի ապարատ է և աշխատում է ջրային փակ շրջանառու համակարգով: Ջուրը 1.0մ³ տարողությամբ բաքից՝ 0.8մ³/ժամ արտադրողականության, պոմպի միջոցով մղվում է հովացուցիչի միջխողովակային տարածք, իսկ գազերը, անցնելով խողովակային հատվածով, հովանում են և արտանետվում: Հովացման համակարգում ջրի կորուստը կազմում է օրական 5-10% և լրասնուցման համար թարմ ջրի ծախսը կազմում է 0.08մ³/օր կամ 24.0մ³/տարի: Բացառելով գազերի հետ ջրի շփումը, համապատասխանաբար կանխվում է ջրի արտահոսքը և աղտոտումը: Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է 584.49մ³/տարի, իսկ հեռացվող կեղտաջրերի կազմը, որը բնորոշ է կոմունալ-կենցաղային կեղտաջրերի կազմին, կկազմի 246.41մ³/տարի:

Գործունեության ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ բնապահպանական միջոցառումները և մոնիթորինգը.



- ապահովել այրման ռեժիմը և անհրաժեշտ ջերմաստիճանն ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդային խցում,
- պարբերաբար իրականացնել սարքի պրոֆիլակտիկ ստուգում և թեստավորում,
- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից,
- իրականացնել օդային ավազանի մոնիթորինգ՝ պինդ մասնիկների, ծծմբային անհիդրիդի, քլորաջրածնի, ածխածնի և ազոտի օքսիդների,
- թափոնների պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,
- վնասագործման սարքի մաքրումն իրականացնել չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:
- բեռնարկղերի մեջ տեղադրված թափոնների ժամանակավոր պահման համար արտադրական տարածքում առանձնացնել հատուկ տարածք, որն ունենա բետոնապատ հատակ,
- ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն,
- պարբերաբար իրականացնել մերձակա տարածքների ստուգում,
- արտադրական կեղտաջրերի առաջացումը կանխելու համար համալիրի մաքրումը իրականացվելու է չոր եղանակով, առանց ջրի կամ լուծույթների օգտագործման,
- ընկերության աշխատակիցներին ապահովել հատուկ պաշտպանության միջոցներով՝ ամառային և ձմեռային արտահագուստով, պաշտպանիչ ակնոցներով, դիմակներով և այլն:

Մոնիթորինգի (մշտադիտարկումներ) իրականացման համար, ամսեկան կտրամադրվի 200.0 հազ. դրամ: Այդ նպատակով նախատեսվում է կայանքի շահագործման տարածքում կատարել նմուշառում և օդում նշված նյութերի պարունակության որոշում: Նմուշառման կետերը պետք է լինեն համալիրի ծխատար խողովակի մերձակայքում՝ 2.0-5.0մ շառավղով:

Վերլուծելով և քննարկելով ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությունը, 2008թ. շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված դրական փորձաքննական եզրակացությունը, առողջապահության և արտակարգ իրավիճակների նախարարությունների կարծիքները, իրականացված հանրային քննարկումների արդյունքները, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա լրաշակված նախագծային փաստաթղթերը կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Հանրային (12.08.2019թ. 4-րդ փուլ) քննարկման ժամանակ բարձրացվել են հարցեր որոնք կապված էին սանիտարապահական գոտու ապահովման, ինչես նաև ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումների հետ:

Համաձայն ՍՆ 245-71-ի նախատեսվող գործունեության համար նախատեսված է 300.0մ սանիտարապաշտպան գոտի, ինչն ըստ նախնական ներկայացված փաստաթղթերի չէր ապահովում, ինչի մասին նշվել էր նաև առողջապահության նախարարության կարծիքում: Նշված պահանջը բավարելու և հիմնավոր պարզաբանումներ ներկայացնելու նպատակով՝ Ընկերության պատվերով, <<Կարեն Մաչանյան>> ԱԶ-ն համայնքի տարածքում իրականացրել է գեոդեզիական աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում պարզվել է, որ արտանետման աղբյուրից մինչև ամենամոտ բնակելի տարածքի հեռավորությունը կազմում է 330.0մ (հիմք՝ <<Կարեն Մաչանյան>> ԱԶ-ի եզրակացություն և հողամասի իրավիճակային

ռատակագիծ): Տրամադրված եզրակացության և իրականացված կադաստրային չափումների արդյունքում հիմնավորվել է նորմերով պահանջվող սանիտարապաշտպան գոտու պահպանման հիմքերը:

Փորձաքննության ընթացքում դիտարկվել են նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը, չափերը և գործունեության հզորությունը, շահագործման ժամանակ նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը, որը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, թույլատրելի նորմայի սահմաններում է: Նախագծում լուծված են կեղտաջրերի հեռացման, տարածքում վտանգավոր թափոնների տեղադրման և պահպանման, առաջացած թափոնների հեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, ինչպես նաև մշտադիտարկումների հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական ծրագրի պահանջներին:

2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար: Բնապահպանական ծրագրի, ինչպես նաև մոնիթորինգի արդյունքների չբավարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ կողմից ներկայացված Թափոնների ոչնչացման համալիր վերազինման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:



Գլխավորնազեն

Կ. Մովսիսյան